



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

04.06.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/62

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով Ա/Ձ Ռաֆայել Մկրտչյանի կողմից 14.05.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/62 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. Ա/Ձ Ռաֆայել Մկրտչյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Ա/Ձ Ռաֆայել Մկրտչյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) 14.05.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մանոմետրերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր) սահմանվել է հետևյալը՝

Ձ/Ը	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական բնութագիրը
3	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷4 կգո/սմ ²
4	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷10 կգո/սմ ²
5	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷16 կգո/սմ ²
6	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷25 կգո/սմ ²
7	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ; ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷160կգո/սմ ²
8	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Անկյունազծային շտուցեր, 220 (110)Վ, չափման սահմանը 0÷250 կգո/սմ ²
9	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Անկյունազծային շտուցեր; 220 (110)Վ, չափման սահմանը 0÷1,6 կգո/սմ ²
3	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷4 կգո/սմ ²
4	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷10 կգո/սմ ²

www.gnumner.am և www.armeps.am համացանցային պաշտոնական կայքերում հրապարակվել է Ընթացակարգի հրավերը, որի համաձայն հայտերի բացման նիստը պետք է տեղի ունենա 2018թ. մայիսի 14-ին ժամը 15:00-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախատրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդը ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, Բողոքաբերը գտնում է, որ Պատվիրատուն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով ընթացակարգի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով (թիվ 3-9-րդ

չափաբաժինների մասով) գնման առարկայի բնութագրերը նկարագրելիս և դրա հատկանիշները սահմանելիս պահանջ և հղում է կատարել կոնկրետ առևտրային (ապրանքային) նշանին, ֆիրմային անվանմանը և արտադրողին: Այս պարագայում Պատվիրատուն կոնկրետ հղումներ օգտագործելու դեպքում պետք է սահմաներ «կամ համարժեք» բառերը, որը բացակայում է 3-9-րդ չափաբաժինների համար նախատեսված տեխնիկական բնութագրերում, ինչը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Պատվիրատուն մյուս բոլոր չափաբաժինների մասով նշելով կոնկրետ ապրանքային նշանը սահմանել է նաև «կամ համարժեք» բառերը, օրինակ՝

19-րդ չափաբաժին-մանոմետր MO-11202 կամ համարժեք

23-րդ չափաբաժին-մանոմետր МТП-160 կամ համարժեք

44-րդ չափաբաժին-մանոմետր ДВ 2005Сг կամ համարժեք

Բողոքաբերը նշել է, որ որպես ապացույց ցանկանում է նաև ներկայացնել մեկ օրինակ, մասնավորապես www.specarmatura.ru պաշտոնական կայքում առկա տեղեկատվության համաձայն էլեկտրակոնտակտային մանոմետր՝ TM 610 P, 05 մոդելը հանդիսանում է լիարժեք տեխնիկական անալոգը ЭКМ էլեկտրակոնտակտային մանոմետրի (կցվում է):

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ մանոմետրերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերում նման տեխնիկական բնութագրեր սահմանելով Պատվիրատուն մրցակցության հավասար պայմաններ չի ապահովել հնարավոր մասնակիցների համար, իսկ նման բնութագրերը հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից մանոմետրերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխել Ընթացակարգի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրերը՝ թիվ 3-9-րդ չափաբաժինների մասով և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2. 1-ին մասով նախատեսված պահանջը բավարարելու անհնարին լինելու պարագայում՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից մանոմետրերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ չկայացած հայտարարել Ընթացակարգի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրերը՝ թիվ 3-9-րդ չափաբաժինների մասով:

Ա/Ձ Ռաֆայել Մկրտչյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.05.2018թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.05.2018թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար մանոմետրերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 3-9-րդ չափաբաժինների համար նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական բնութագիրը
3	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, Ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷4 կգու/սմ2
4	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, Ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷10 կգու/սմ2
5	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, Ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷16 կգու/սմ2
6	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, Ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷25 կգու/սմ2
7	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ; Ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷160կգու/սմ2
8	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, Ճշգրտության կարգը՝ 1,5; Անկյունագծային շտուցեր, 220 (110)Վ, չափման սահմանը 0÷250 կգու/սմ2
9	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, Ø=160մմ, Ճշգրտության կարգը՝ 1,5; Անկյունագծային շտուցեր; 220 (110)Վ, չափման սահմանը 0÷1,6 կգու/սմ2

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Ռաֆայել Մկրտչյանի 14.05.2018թ. բողոքը, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար մանոմետրերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 3-9-րդ չափաբաժինների համար նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Ձ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական բնութագիրը
-----	-----------------------------------	-----------------------

3	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, $\emptyset=160$ մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷4 կգու/սմ ²
4	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, $\emptyset=160$ մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷10 կգու/սմ ²
5	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, $\emptyset=160$ մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷16 կգու/սմ ²
6	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, $\emptyset=160$ մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷25 կգու/սմ ²
7	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, $\emptyset=160$ մմ; ճշգրտության կարգը՝ 1,5; Շառավղային խողովակապտուկ, 220 (110) Վ, չափման սահմանը՝ 0÷160կգու/սմ ²
8	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, $\emptyset=160$ մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Անկյունագծային շտուցեր, 220 (110)Վ, չափման սահմանը 0÷250 կգու/սմ ²
9	Էլեկտրակոնտակտային մանոմետր	ՅՔՄ, $\emptyset=160$ մմ, ճշգրտության կարգը՝ 1,5; Անկյունագծային շտուցեր; 220 (110)Վ, չափման սահմանը 0÷1,6 կգու/սմ ²

«Վճարատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 3-9-րդ չափաբաժինների մասով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսթիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 3-9-րդ չափաբաժինների համաձայն՝ նախատեսվել է ձեռք բերել համապատասխան տեխնիկական հատկանիշներով էլեկտրակոնտակտային մանոմետր: Միևնույն ժամանակ Ընթացակարգի 3-9-րդ չափաբաժինների մասով գնման առարկաների տեխնիկական բնութագրերի մեջ նշվել է «ՅՔՄ» հապավումը: Ա/Ձ Ռաֆայել Մկրտչյանը բողոքով հայտնել է, որ Պատվիրատուն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-75/18» ծածկագրով ընթացակարգի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով (թիվ 3-9-րդ չափաբաժինների մասով) գնման

առարկայի բնութագրերը նկարագրելիս և դրա հատկանիշները սահմանելիս պահանջ և հղում է կատարել կոնկրետ առևտրային (ապրանքային) նշանին, ֆիրմային անվանմանը և արտադրողին: Այս պարագայում Պատվիրատուն կոնկրետ հղումներ օգտագործելու դեպքում պետք է սահմաներ «կամ համարժեք» բառերը, որը բացակայում է 3-9-րդ չափաբաժինների համար նախատեսված տեխնիկական բնութագրերում:

Այս առումով հայտնում եմ, որ Ընթացակարգի 3-9-րդ չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերում նշված «ՅՄՄ» հապավումը հանդիսանում է ոչ թե ապրանքային նշան, ֆիրմային անվանում, արտադրող կամ մոդել, այլ իրենից ներկայացնում է **ապրանքի անվանումը, այն է՝ էլեկտրակոնտակտային մանոմետր (Электроконтактный манометр), որը ուսերեն լեզվով ձևակերպվել է որպես «ՅՄՄ» հապավում:**

Այսպիսով՝ Պատվիրատուի կողմից որևէ հղում չի կատարվել Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էքզիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, այլ ընդամենը սահմանվել է գնման առարկայի անվանումը՝ էլեկտրակոնտակտային մանոմետր բառի թարգմանված ուսերեն հապավումը: Ընդ որում՝ «ՅՄՄ» (էլեկտրակոնտակտային մանոմետր) բառը չի բնութագրում կոնկրետ հատկանիշներով օժտված էլեկտրակոնտակտային մանոմետր, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի առաջարկել գնման առարկայի տեխնիկական բնութագրով նախատեսված պարամետրերին համապատասխանող էլեկտրակոնտակտային մանոմետր, ինչն էլ իր հերթին ապահովում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումը:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ TM 610 P, 05 մոդելը հանդիսանում է լիարժեք անալոգը «ՅՄՄ» էլեկտրակոնտակտային մանոմետրի, ապա հայտնում եմ, որ TM 610 P, 05 հանդիսանում է հենց «ՅՄՄ», այսինքն նշված մոդելի սարքը հանդիսանում է էլեկտրակոնտակտային մանոմետր:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի թիվ 3-9-րդ չափաբաժիններով գնման առարկայի հատկանիշները բնութագրելիս չսահմանելով «կամ

համարժեք» բառերը, չի խախտել Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պահանջը:

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ Ա/Ձ Ռաֆայել Մկրտչյանի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Ռաֆայել Մկրտչյանի կողմից 14.05.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ՄՎԵՐ ԱՆԱՆՅԱՆ